70-ԱՄՅԱԿ

2000 թվականի դեկտեմբերի 5-ին լրացավ «Էջմիածին» ամսագրի երկարամյա աշխատակից Վոլոդյա Աբրահամյանի ծննդյան յոթանասունամյակը:

Մայր Աթոռի աշխատակիցների մեծամասնությունը Վ. Աբրահամյանին ճանաչում է իբրև երկարամյա, բարեխիղճ ու անբասիր աշխատող: Նրան տեսել են միշտ իր գրասեղանին հակված բնագրեր համեմատելիս, անփութորեն գրված ձեռագիր վերծանելիս, իր գլխից անցած դեպքերը թղթին հանձնելիս կամ խմբագրությանը հանձնված հոդվածների վերջնական տարբերակները սրբագրելիս: Նա սրբագրական նրբություններին քաջատեղյակ մարդ է, անբասիր քաղաքացի, սկզբունքային ու սրտակից ընկեր, հոգատար հայր ու ամուսին: Աշխատասիրությունը և պարտաճանաչությունը ցավոք այժմ հազվագյուտ դարձած այն հատկանիշներն են, որոնք բարեբախտաբար տակավին բնութագրական են Վ. Աբրահամյան հոբելյարին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է իր երկարամյա և անզուգական աշխատակցի ծննդյան յոթանասունամյակը, մաղթում նրան երկար տարիների առողջ կյանք ու համագործակցություն:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ